ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔ-ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՊԸ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀՍԿԱՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սյունիքի և Արցախի լեռնային առասպելաբանության մեջ ներկայացված են Հրուշան, Ուշափ, Բոլ, Օղուզ անունները կրող և անանուն հսկաներ, որոնց շուրջ առասպելական զրույցները կարող են լինել արխաիկ և ներկայացնել երկրաբանական պրոցեսների առասպելական արտացոլում և կամ կապվել պատմական, պատմողին մոտ ժամանակների հետ: Դրանց սյուժեները հաճախ կապվում են քրիստոնեական ուխտատեղի-սրբավայրերի հետ, որոնց մի մասը կրում են Ձգնավոր անունը կամ նվիրված են Ս. Պանտալեոնին: Այդ ճանապարհով արխաիկ պաշտամունքը քրիստոնեական կերպարանք է ստանում և միաժամանակ պահպանում է հին առասպելաբանությունը:

Բանալի բառեր` *հսկա, սրբավայր, Զանգեզուր, Արցախ, Ձգնավոր, լեռնային առասպելաբանություն, ազնավուր:*

Հայ ժողովրդի հավատալիքների մեջ զգալի թիվ են կազմում լեռնային հսկաների կերպարները, որոնք ներկայացնում են նախաքրիստոնեական, հաճախ` նախապատմական ժամանակների բնակիչներին: Այդպիսի հսկաները ազգագրական տարբեր շրջաններում կոչվել են տարբեր անուններով` ազնավուր (ազնաւուր), ֆերեզ` Արևմտյան Հայաստանում, օհուզ, կամ օղուզ` Արագածոտնում, Վայոց Ձորում և այլն: Նրանց անուններով կոչվում են քարաժայռեր, նախաքրիստոնեական շինություններ` դոլմեններ, բերդերի ավերակներ, մեծ տապանաքարեր և այլն: Տարբեր սյուժեներում այդ հսկաների շարքին կարող են դասվել առասպելական և վիպական հերոսները, ինչպիսիք են` Հայկը, Նեմրութ-Բելը, Պռոշ թագավորը[1], «Սասնա Ծռեր» դյուցազնավեպի հերոսները[2], կամ Ֆահրադը[3]: Սովորաբար, այդ հսկաների անունների հետ է կապվում տեղական լանդշաֆտի փոփոխությունները նկարագրող առասպելաբանությունը, և հաճախ հսկաները զոհ են գնում մահկանացու աղջկա հանդեպ իրենց տածած սիրուն: Այդ հսկաները կարող են չունենալ անուններ կամ համարվել դևեր, հրեշներ, միակնանի թափագլոզներ, աժդահաներ, վիշապներ կամ կրել

1 **Ժամկոչյան Ա. եպս., Սիմոնյան Լ.**, Աստվածաշնչյան Նեբրովթը և Նեմրութ թագավորը հայ բանահյուսության մեջ// Տարեգիրք Աստվածաբանական ֆակուլտետ, ԺԱ, 2016, էջ 273-302:

2 Ըստ մի հավատալիքի` Միհերի դռան ետևում պահվում էր անթիվ հարստություն, որը պահպանում էր «ջոջ ազնավուր»-Միհերը, իսկ մեկ այլ հսկա` Դավիթը, պատերազմի էր եկել նրա դեմ և իր թրով ճեղքել Միհերի դուռը, տես` **Բիւզանդիոնի թղթակից**, Խալտեան հնութիւնք// «Բիւզանդիոն», 1899, № 699, էջ 1:

3 Այստեղից` «ֆերեզ» անվանաձևը: Ֆահրադի` որպես լեռնային հսկայի մասին հայկական զրույցները տես` **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատ. 2, Երևան, 1982, էջ 216, **Ն. Սարգիսեան**, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 79-80: Ազնավուրների սիրեցյալ աղջիկները ևս հաճախ կրում են Ֆահրադի սիրեցյալ Շիրինի անունը, տես` **Գ. Սրվանձտյանց**, Երկեր, հատ. 1, Երևան, 1978, էջ 58-59: Այստեղ Շիրինի բուն սիրելիի անունը Ղովտ է:

աստվածաշնչյան հերոսների անուններ, աղավաղված տեղանուններ (Էզեկել[1], Առնաուտ[2], Ղովտ[3], Լևենտ[4]), իսկ նրանց առասպելաբանության մոտիվները կարող են միանալ կամ միախառնվել մարդ-հերոսների մասին զրույցներին: Հայոց մեջ չկա նրանց «լեռնային ոգի» համարելու սովորությունը, ընդհակառակը, նրանք միշտ նյութական են և տեսանելի[5]:

Սակայն իրենց առավել արխաիկ ձևի մեջ լեռնային հսկաները ներկայացնում են բնության անկառավարելի ուժերը, իսկ նրանց առասպելները պատմում են հրաբխային երևույթների, քարերի գահավիժման, գետերի հուների փակվելու, երկրաշարժերի և տարերային այլ աղետների մասին: Դրանով իսկ այդ առասպելները զուգահեռվում են բուն լեռնային առասպելաբանության հետ, որտեղ, իբրև հերոս, հանդես են գալիս հենց լեռները, ու երբեմն կրկնում են դրա սյուժեները:

Թեև հսկաների առասպելաբանությունը, կապված պատմական Հայաստանի տարբեր տարածքների հետ, բավականաչափ ուսումնասիրված չէ, եղած նյութը թույլ է տալիս խոսելու դրա միանգամայն լայն տարածվածության մասին:

Հսկաների առասպելաբանությունը բնորոշ է նաև Սյունիք-Զանգեզուրին և Արցախին, ընդ որում՝ այս տարածքներում գրառված նյութերում հսկաները չունեն ընդհանրական անվանում, ինչպես կտեսնենք ստորև, միայն Գետաշենի առասպելներից մեկում հիշատակվում է «օղուզ» անվանումը:

Լեռներն, ինչպես հայտնի է, հաճախ ծառայել են նաև վանք-մենաստանների և ճգնավորական խուցերի կառուցման վայրեր, և սարերն ու բլուրները երբեմն իրենց անուններն են ստացել այն սրբավայրերից, որոնք կառուցված են եղել դրանց վրա՝ Ս. Խաչ, Սբոհան և այլն:

Պատահական չէ ուրեմն, որ լեռնային հսկաների, որոշ դեպքերում՝ լեռնային վիշապների, առասպելաբանությունը միացել է նաև սրբերի մասին հրաշալի պատմություններին: Այդ դեպքում հրաշալի իրադարձությունների վայրերը ծառայել են նաև որպես ուխտատեղիներ, որոնց մարդիկ այցելել են պաշտամունք մատուցելու, կենսական խնդիրները Աստծու տնօրինությանը հանձնելու կամ որոշակի հիվանդություններից, ցավերից ազատվելու նպատակով:

Պահպանվել է հսկաների մասին միևնույն առասպելի երեք տարբերակ, որոնցից մեկը գրառել է Ե. Լալայանը այդ ժամանակ Զանգեզուրի մեջ մտնող չճշտված վայրում, մյուսը՝ Ս. Խանզադյանը՝ Սիսիանում, երրորդը՝ Բ. Ղազիյանը՝ Արցախի Ղարաղշլաղ (ներկայումս՝ Բերդաձոր) գյուղում:

Առաջինը և երկրորդը Հրուշան հսկայի և նրա քրոջ որդու՝ Զոնգի Գիքիի

1 **Գապասագալեան Թ.**, Էզէկէլին հեքեաթը, «Բիւրակն», 1899, թ. 35, էջ 555-556:

2 **Խալաթեան Գ.**, Ժողովրդական բանաւոր գրականութեան տեսակները, «Բիւրակն», 1898, թ. 8, էջ 121:

3 Օրինակ, «Ջան պոլատ» հեքիաթում. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հատ. II, Երևան, 1959, էջ 53:

4 **Հալաջյան Գ.**, Դերսիմի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 5, Երևան, 1973, էջ 50:

5 Անգամ Ա. Իսահակյանը, տալով լեռնային հսկայի կերպարը, մատուցում է նրան որպես կենդանի, մարմնեղեն արարած, որի ոգին սավառնում է «Մռայլ Կասպիականից մինչև Պոնտոսյան հորձանքները», տես՝ Լեռների հսկան// **Ավետիք Իսահակյան**, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 3, Երևան, 1975, էջ 115:

պատմությունն է[1] և կապված է Սաղսաղան լեռան գագաթին գտնվող դոլմենի հետ: Երրորդը՝ Ուշափ մականունով, Սվերանց տոհմի հսկա ավազակի և նրա եղբորորդի Չոմբիի պատմությունն է[2] և կապված է Քիրս սարի վրայի Ղարաղշլաղի խութ (բլուր) կոչվող վայրի՝ Ուշափի քարի հետ:

Հրուշանը և Սվերանց Ուշափը իրենց ուժին չտիրապետելու պատճառով ապրում են լեռան վրա և իրենց համար տուն են շինում այնտեղ հսկա քարերից, իսկ Ուշափը նաև կամուրջ է սարքում: Նրանք զբաղվում են ավազակությամբ և թալանում են քարավանները, ինչպես նաև խաբեությամբ սպանում են այլ հսկաների: Հայտնի են նրանց զենքերը. Հրուշանի դեպքում հիշատակվում է հսկայական նիզակը, Ուշափի դեպքում՝ երկաթե ծանր մահակը, որոնցով էլ նրանք մահ ու սարսափ են սփռում իրենց բնակավայրում: Մի դեպքում՝ Չոնգի Գիքին, մյուս դեպքում՝ Չոմբին սնունդ են տանում իրենց արյունակից ազգականին: Երբ հսկան ուտում է, երիտասարդը փորձում է բարձրացնել նրա զենքը և զարմանում է, թե ինչպես է քեռին կամ հորեղբայրը կարողանում հեշտորեն կառավարել այդ ծանր առարկան: Հսկան խոստանում է, որ հենց ուտի-վերջացնի, իր իսկ վրա ցույց կտա զենքի գործածման եղանակը: Երիտասարդը, հասկանալով, որ հսկան իրեն սպանելու է, այդ ծանր զենքով հարվածում է հսկայի ծնկներին, որից վերջինիս ոտքերը փշրվում են: Հսկան խնդրում է վերջ տալ իր կյանքին, և երիտասարդը մի երկրորդ հարվածով փշրում է նրա գլուխը: Հսկային թաղում են իր բնակավայրից ոչ հեռու, և նրա գերեզմանաքարը մնում է որպես հիշատակ նրա գործած ավերածությունների, իսկ տարածքում դրանից հետո խաղաղություն է հաստատվում:

Առաջին հայացքից բուն տեղական և փոքր-ինչ զավեշտական թվացող պատմությունն այդուհանդերձ ոչ այլ ինչ է, քան լեռնային հսկաների մասին գրեթե համահայկական տարածում ունեցող առասպելական շարքի սյունիքարցախյան դրսևորումը: Դրույթը հիմնավորելու համար հարկ է դիտարկել առասպելում առկա մոտիվները մեկ առ մեկ: Ինքնին այն, որ հսկաներն ընկալվում են որպես մարդ-ավազակներ, առասպելի «պատմականացման», անհիշելի ժամանակներից դեպի ավելի մոտ, «շոշափելի» անցյալը տեղափոխելու երևույթ է: Այսպես, Գանձակի Բով ձորի մեջ ցցված երեք հսկայական ժայռերի մասին ժողովուրդը պատմել է, թե դրանք Բով իշխանի երեք աժդահա եղբայրներն են, որոնց քարի է վերածել չար կախարդը[3]: Նման երևույթ հայտնի է, մասնավորապես, Արագածոտնի Երնջատափ գյուղի Ազնավուրի գերեզման հնամենի քար-սրբավայրի դեպքում: Այդ սրբավայրը, որի առաջացումը գյուղական ավանդազրույցը կապում է Ազնավուր անունով հսկա, ուժեղ անձի՝ թուրքերի ձեռքով սպանվելու միջադեպի հետ, ըստ պատմողների, ունի մոտ երեք հարյուր տարվա հնություն: Միայնակ դիմադրելով մոտ տասնհինգ հակառակորդների՝ Ազնավուրն ի վերջո զոհվում է և թաղվում նույն տեղում, քանի որ թուրքերը հրաժարվում են համագյուղացիներին հանձնել նրա մարմինը: Հետագայում այդ գերեզմանը դառնում է սիրված ուխտատեղի, որին այցելել և

1 **Լալայեան Ե.**, Զանգեզուր// ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 16-17: **Ս. Խանզադյան**, Հայրենապատում, գիրք Ա, Երևան, «Հայաստան», 1980, էջ 29:

2 ՀԱԻ արխիվ, Բ. Ղազիյանի ֆ., թղթ. 4, մատյան 9, թ. 18-20:

3 **Ղազարյան Ն.**, Գանձակի գավառի (Ելիզավետպոլի) հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները// ՀԱԻ ԱԲԱ, թղթ. 81, 2/014, թ. 62:

պաշտամունք են մատուցել Համբարձման տոնին[1]: Այդուհանդերձ, Ազնավուրի գերեզման անունով հայտնի են եղել բազմաթիվ ժայռ-կոթողներ Արևմտյան Հայաստանում, և դրանք սովորաբար կապվում էին նախաքրիստոնեական կամ նույնիսկ նախապատմական հսկաների հետ, որոնց վերագրվում էր կիկլոպյան ամրոցների, վիշապաքարերի, մենհիրների ու դոլմենների շինությունը[2]: Մինչդեռ Հրուշանը բնակվում է ոչ միայն Սաղսաղան սարի վրա, այլև մեկ այլ տուն է շինում Գարահող լեռնաշղթայի վրա, իսկ անցնող քարավանի առաջ նետում է էշի (հսկա) համետ և մի կաթսա մածուն է թափում, որից մարդիկ ենթադրում են, թե մի հսկա ագռավ էր նստել, ծրտել ու հետո թռել: Լալայանն ինքը Հրուշանին վերագրվող տունը բնութագրում է որպես դոլմեն:

Լալայանի գրառած մեկ այլ առասպելի մեջ ի հայտ է գալիս Բոլ անունով հսկան, որը քարեր է շպրտում Որոտան գետի մեջ և որն իր համար կալ է շինել Շնհերի ձորում, Բոլի կալը[3]:Ս. Խանզադյանը գրառել է Բոլի հետ կապված այլ հավատալիքներ ևս. ըստ նրա բանասաց Գուրգեն Դոլուխանյանի՝ Բոլի հսկան, որ նստում էր Շնհերում և որ Տորք Անգեղի ցեղից էր, կառուցել է Սիսիանի մեգալիթյան Երիվարաց բերդը: Բոլին ժայռեր էր պոկում և նետում Որոտանի մեջ այնքան, մինչև որ գետի մեջ առաջացել էր մի կղզյակ, որի վրա էլ Բոլին կալ էր շինել[4]:

Պատմական Հայաստանի զանազան վայրերի առասպելների ու հավատալիքների համաձայն՝ ազնավուրները հաճախ սիրահարվում և փախցնում էին աղջիկներին և դավադրաբար սպանվում էին այդ աղջիկների սիրեցյալներից: Ազնավուրներն այնքան բարձրահասակ էին, որ հաճախ հնարավոր չէր լինում ամբողջապես թաղել նրանց մարդկանց կողմից փորված գերեզմաններում, ուստի մարդիկ ստիպված էին կտրել նրանց ոտքերը կամ գլուխները և միայն այդպես թաղել: Այդպիսի թաղում է վերագրվում, մասնավորապես, Պռոշ թագավորին, Արճակի Ազնավուրին[5]: Հավանաբար, հենց այս մոտիվն է, որ սյունիք-արցախյան առասպելում վերածվել է ծնկները և գլուխը փշրելու կայուն սյուժեի:

Ի տարբերություն հարթ տեղում գտնվող Երնջատափի Ազնավուրի գերեզմանի՝ մեծ մասամբ օղուզ-ազնավուրների առասպելաբանությունը կապվում է բարձրադիր վայրերի, սարերի ու բլուրների գագաթների հետ: Որպես օրենք՝ այդ բոլոր կերպարները լեռնային լանդշաֆտ են ձևավորում. նետում են քարեր, բացում են անցքեր, փոխում են գետերի հուները և, իհարկե, կառուցում են բերդեր ու թաղվում են հսկա տապանաքար-ժայռաբեկորների տակ. այդպիսին են Բ. Ղազիյանի տարբերակում հիշատակվող Ուշափի գերեզմանը և Հրուշանի տունը: Այսպես, Թ. Թորամանյանը նշում է. «Օշականում, մի փոքր շրջանի մեջ մի քանի դոլմեններ կան, որոնց օշականցիք Օղուցի տներ են ասում, որ

1 **Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ.**, ԴԱՆ, Երնջատափ, 2017, բանասաց՝ Սերգեյ Ումրշատյան, 1935 թ. ծնվ.:

2 **Եղիազարյան Ս.**, Օղուզն ու մարդը. երեք դարաշրջան տիեզերքի պատմութիւնից// Գեղարուեստ, 1906, թ. 6, էջ 152:

3 **Լալայեան Ե.**, Զանգեզուր// ԱՀ, գ. Դ, էջ 17:

4 **Խանզադյան Ս.**, նշվ. աշխ., էջ 28-29:

5 **Ժամկոչյան Ա. եպս., Սիմոնյան Լ.**, նշվ. աշխ., էջ 294: **Ավագյան Ս.**, Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 8, Երևան, 1978, էջ 106:

թերևս կապ ունի այս անվանումը ընդհանուր դոլմենների համար ստեղծված ժողովրդական առասպելի հետ»[1]:

Սովորաբար, մեծ նշանակություն է վերագրվում լեռնային հսկաների զենքին, որ կարող է լինել հսկայական քար, նետուաղեղ[2], «գորզ, ռըմ ճոճային», Թուր Կեծակին[3]: Զանգեզուր-Արցախի հսկա, կամ, որ այստեղ նույն նշանակությունն ունի՝ «ուշափ», հերոսները նույնպես գործածում են ահռելի չափի նիզակ կամ մահակ: Այսպես, Հրուշանի նիզակը տասը զույգ եզներ հազիվ են քաշել[4]:

Լալայանի տարբերակում Հրուշան անունն ունի պարսկական ծագում և, հավանաբար, նույնն է, ինչ Ռուշանը[5]: Վերջին անունով Քյոռ-օղլու մասին արցախյան վիպական պատումներից մեկում հիշատակվում է Քյոռ-օղլու որդին, որը նույնպես, ի վերջո, ավազակ է դառնում և բնակվում է լեռներում[6]: Հսկա Բոլի անունը որոշ վերապահումով կարելի է կապել հայոց առասպելական պատմությունից քաջ հայտնի մեկ այլ հսկայի՝ Տիտանյան Բելի հետ, և, ինչպես կտեսնենք ստորև, Գետաշենի առասպելական մոտիվները թույլ են տալիս տեսնելու ակնհայտ զուգահեռը Հայկի ու Բելի և Պանտի ու Օղուզի առասպելների միջև: Ավելին, Բոլը, ինչպես և Բելի հետ հասարակորեն նույնացվող Նեմրութը[7], հսկայական քարեր է նետում[8]:

Անշուշտ, լեռնային հսկաների առասպելաբանությունը հավասարապես ներկայացված է Արևելյան Հայաստանի մյուս մասերում ևս: Առավել հաճախ նրանց անվանում են օղուզներ, կամ օհուզներ և, ինչպես Արևմտան Հայաստանում, ազնավուրներին կապում են նախապատմական ժամանակների և նախաքրիստոնեական հնությունների հետ: Այսպես, Մ. Սմբատյանցը, ինչպես ավելի ուշ՝ Թ. Թորամանյանը, հիշատակում է Օղուզի տներ և գերեզմանաքարեր՝ Օշականի հարևանությամբ[9], Բյուրականում և շրջակայքում օհուզի քարեր են անվանում վիշապաքարերին[10], իսկ Ս. Եղիազարյանը ծավալուն առասպել է գրառել՝ կապված Վայոց Ձորի օղուզների հետ[11]:

---

1 **Թորամանյան Թ.,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, Արմֆանի հրատ., 1942, էջ 4:

2 **Եղիազարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 148-149:

3 Եղեգիս գյուղի Խնձյուրուտ սարի 14 ֆերեզների գերեզմանները տես՝ **Չիթունի**, Սպակերտի ազգագրական նյութեր// ԳԱԹ, Չիթունու ֆ., 2-ԺԷ, թ. 15:

4 **Խանզադյան Ս.**, նշվ. աշխ., էջ 29:

5 Հմմ., Մոկաց և Սպարկերտի հերոսապատումները հսկա Ռըշգանի մասին: Սովորաբար, սպարկերտցիները նույնացնում էին այդ հսկաներին հայկական (Մհեր, Դավիթ և այլն) կամ պարսկական (Ֆահրադ, Ռոստամ և այլն) վիպական հերոսների հետ, որոնցից էր համարվում նաև Ռըշգան փահլևանը, որի զրույց-վեպը պատմվում էր Ռոստամ-Զալ վեպի հետ, տես՝ **Չիթունի**, նշվ. աշխ.// ԳԱԹ արխիվ, Չիթունու ֆ., 2-ԺԸ, թ. 6-21:

6 **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հատ. VIII, Եր., 1976, էջ 189:

7 **Ժամկոչյան Ա. եպս.**, **Սիմոնյան Լ.**, նշվ. աշխ., էջ 295-297:

8 Նեմրութի՝ քարեր նետելու առասպելը տես՝ **Բենսէ**, Բուլանըխ, կամ Հարք գաւառ// ԱՀ, գ. Ձ, Թիֆլիս, 1900, էջ 30:

9 **Սմբատեանց Մ.,** Ստորագրություն Օշական գեղջ և նորաբաց դպրոցին յանուն Ս. Մեսրովբայ թարգմանչին, 1864 յունվար յՕշական, թ. 18բ (Ձեռագիրը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում): Նյութը տրամադրելու համար շնորհակալություն եմ հայտնում պ գ. թ. Սուսաննա Ադամյանին:

10 **Մնացականյան Ա.**, «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի դիցաբանության մասին// Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի. Հասարակական գիտություններ, 1952, №5, էջ 84:

11 **Եղիազարեան Ս.**, նշվ. աշխ.:

Օղոզի քարի վերաբերյալ առասպելի մի տարբերակ է պահպանվել Պանտ լեռան շուրջ: Գետաշեն (հնում՝ Չայքենդ) գյուղը, որը շրջապատված է լեռներով, և լեռնալանջերի մեջ փորված են բազմաթիվ քարայրներ, դեռևս 19-րդ դ. երկրորդ կեսից գրավել է ուսումնասիրողներին իր հնամենի ու արխաիկ սրբավայրերով և դրանց հետ կապված առասպելաբանությամբ: Գետաշենի՝ հրեշի ու Պանտի մասին առասպելը, բարեբախտաբար, գրառվել է մի քանի տարբերակներով, որոնց համեմատությունը լեռնային հսկաների մասին սյունիքարցախյան մյուս զրույցների հետ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու առասպելական այդ ցիկլի տարածվածության և մոտիվային հարստության, ինչպես նաև՝ քրիստոնեական սրբավայրերի հետ կապվելու եղանակների մասին:

Ըստ առավել ամբողջական տարբերակի, որը գրառել է Վ. Դևիցկին[1], Գետաշենի դիմացի լեռան քարանձավներից մեկում ապրում էր մի հրեշ, որ ստրկացրել էր բնակիչներին, խլում էր նրանց ունեցվածքը և զանազան առաջադրանքներ տալիս, որոնք չկատարողին խժռում էր: Նա ստիպում է բնակիչներին իր համար գտնել շրջակայքի ամենագեղեցիկ աղջկան, և այդպիսին է լինում Գետաշենի հովվի դուստրը: Հրեշի խնամախոսները, սակայն, ստանում են հովվի վճռական մերժումը: Հրեշը կատաղած բարձրանում է լեռան գագաթը և պոկում է ամենամեծ քարը՝ մտադրվելով գլորել այն Գետաշենի վրա և ոչնչացնել գյուղն իր բնակիչներով: Սակայն նրա շարժումներին հետևում էր դիմացի սարի վրա բնակվող Ճգնավորը, որը սգում էր իր քրոջ գերեզմանին: Երբեմնի քույր ու եղբայր գերի էին հեթանոսների ձեռքում, և նրանց թագավորը կամենում էր ամուսնանալ աղջկա հետ, սակայն վերջինս չէր ցանկանում իր կյանքը կապել հեթանոսի հետ, և թագավորի ցասումն ստիպում է երիտասարդ քրիստոնյաներին փախուստի դիմել: Նրանց հետապնդում են, և թագավորի ծառաներից մեկի նետը մահացու խոցում է աղջկան: Եղբայրը թաքնվում է անտառում, թաղում քրոջ մարմինը և ուխտում հավերժ մնալ քրոջ գերեզմանի մոտ: Հենց այդ Ճգնավորն էլ, տեսնելով, որ հսկան քար է նետում գյուղի վրա, ծնկում և աղոթում է Աստծուն՝ խնդրելով փրկել գյուղի բնակիչներին: Աստված լսում է նրա աղոթքը, և հսկայի գլորած քարը տեղ չի հասնում, այլ կանգ է անում ժայռի մի ցցվածքի վրա: Այդ ժամանակ հսկան իջնում է քարի մոտ, որ կրկին հրի այն, բայց հպվելով դրան՝ ինքն էլ քարանում է: Երբ ճգնավորը միաժամանակ անց մահանում է, այդ մասին բնակիչներն իմանում են նրա հյուղակի կտուրի վրա կանգնած կրականման լույսից: Նրան թաղում են քրոջ կողքին և վրան մի մատուռ են կառուցում, անունը դնում են Պանդ ամրոց, որը դառնում է ուխտատեղի, իսկ հրեշի քարարձանը այդպես էլ մնում է հանդիպակաց ժայռի վրա կանգնած:

Թ. Ջեյրանովի գրառած երկրորդ տարբերակն ավելի կարճ է, բայց ուշագրավ է այն բանով, որ դրանում հիշատակվում է հրեշի անունը՝ Օղոզ[2]: Օղոզի քարը, որը գտնվում է գյուղի դիմացի ժայռի վրա, ոչ այլ ինչ է, քան քարացած հսկան, որը, գյուղի աղջիկներից մերժվելով, հենվում է մի հսկա ժայռի, որ մեջ-

1 **Девицкий В.**, Чудовище и отшельник, СМОМПК, вып. 24, Тифлис, 1898, отд. второй, с. 224-226.

2 **Джейранов Ф.**, Селение Чайкенд, СМОМПК, вып. 25, Тифлис, 1898, отд. второй, с. 89.

քին առնի այն և նետի գյուղի վրա: Սակայն Պանտը, խղճալով գյուղի բնակիչներին, մտրակի մի հարվածով քարացնում է Օղոզին:

Ե. Լալայանը նույնպես անդրադառնում է այս առասպելին, սակայն չի միացնում ճգնավորի պատմությունը քարացած հսկայի սյուժեին, այլ շարադրում է՝ որպես երկու առանձին պատմություններ: Նախ պատմելով լեռնային հրեշների մասին՝ հիշատակում է Գետաշենի աղջիկների տերերից մերժված հրեշին, որն արդեն շալակած տանում է մեծ քարը, որ նետի գյուղի վրա, բայց Պանտը, խղճալով գյուղացիներին, իր նիզակը նետելով, գամում է հրեշին իր իսկ տարած քարին, որն այդպես էլ մնում է գյուղի հանդիպակաց ժայռի վրա[1], իսկ հետո ներկայացնում է պատմությունը թուրք քույր ու եղբոր մասին, որոնց հալածում են քրիստոնեություն ընդունելու համար, և որոնք նահատակվում ու թաղվում են, մեկը՝ Պանտ լեռան վրա, որն այդպես է կոչվում տղայի՝ Պանտալեոնի անունով, մյուսը՝ Մռութ գյուղի մոտ, որտեղ նույնպես Նահատակ սրբավայր կար[2]: Դրանից անկախ, Լալայանը նկարագրում է Պանտալեոն բժշկին նվիրված ևս մեկ մատուռ, այս անգամ՝ Ղարաղշլախ (հավանաբար, նույն Բերդաձորն է, որտեղ Բ. Ղազիյանը գրառել է Ուշափ քարի զրույցը) գյուղի մոտ գտնվող մի բլրակի վրա: Մատուռի մեջ է գտնվել Ս. Պանտալեոնի ենթադրյալ գերեզմանը, որի վրա սկզբում սովորական կոճղ, հետո միայն՝ տապանաքար է եղել: Մատուռից ոչ հեռու եղել է ևս մեկ գերեզման-մատուռ: Տեղացիները Պանտալեոնին անվանել են Պիժ, իսկ մյուս մատուռի սրբին՝ Շահզադա (արքայորդի)[3]:

Եվ ահա միանում են առասպելաբանության երկու շերտ՝ լեռնային հսկաներն ու ճգնավոր-նահատակները: Ակնհայտ են քարացած հսկաների կամ լեռնային հսկաների գերեզմանների պաշտամունքային-առասպելական կապերը Ս. Պանտալեոնին կամ անանուն նահատակ-ճգնավորներին նվիրված մատուռների հետ. Ղարաղշլաղ-Բարդաձորում՝ Ս. Պանտալեոն-Պիժ, Շահզադա և Ուշափի գերեզման, Գետաշենում՝ Ս. Պանտալեոն, Ս. Նահատակ և Օղուզի քար: Այսպիսի օրինակները կարելի է շարունակել: Այսպես, Ճգնավորի անունով մի սար իր մատուռով հայտնի է Սիսիանի Շաղատ գյուղի հարևանությամբ, Քեչաբերդ սարի (Քաջքաբերդի) դիմաց: Ըստ Ե. Լալայանի՝ Քեչաբերդի վրա իսկապես կային ավերակ բերդի հետքեր, իսկ Ճգնավորը պաշտամունքավայր էր, և գյուղացիները նույնիսկ մի մատուռ էին կառուցել դրա լանջին: Պաշտամունքի առարկա էր նաև սարի գլխին գտնվող 30 մ. բարձրությամբ մի ժայռաբեկոր, դեպի որը գալիս էին և ստորև՝ մատուռի մոտ, զոհեր էին մատուցում երաշտի դեպքում[4]: Այդ սրբավայրի մասին Ս. Լիսիցյանը գրում է. «... պաշտվում էր ցցված ժայռը, որը կարծես մարդու ձեռքով պրիզմայաձև քարերից շարված լինի: Վարդավառի տոնին երկու սրբավայրերն էլ բարեպաշտ բնակիչների ուխտագնացության վայրեր էին»[5]: Անկասկած, սա այն դեպքն է, երբ սրբավայրն իր անունն է տվել սարին, իսկ ցցված մարդանման քարը և Ճգնավորի մատուռը իրար կապված են եղել այժմ մոռացված ինչ-որ առասպելով, որի արձագան-

1 **Լալայեան Ե.**, Գանձակ գաւառ// ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 351-352:
2 Նույն տեղում, էջ 356-357:
3 **Լալայեան Ե.**, Զանգեզուր// ԱՀ, գ. Դ, էջ 49:
4 **Լալայեան Ե.**, Սիսիան// ԱՀ, հատ. Գ, Թիֆլիս, 1897, էջ 186:
5 **Լիսիցյան Ստ.,** Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 279:

քը պահպանվել է միայն համատեղ ուխտագնացության մեջ: Հնարավոր է, որ պատահական չէ նաև հանդիպակաց սարի Քեչաբերդ անունը, որ, հավանաբար, երբեմնի կապված է եղել քաջքերի շուրջ եղած հավատալիքների հետ:

Պետք է ենթադրել, որ քաջքերը և լեռնային հսկաները կարող էին փոխարինել միմյանց, քանի որ ոչ սակավ դեպքերում լեռնային դև-հսկաների փոխարեն հանդես են գալիս վնասատու կամ նույնիսկ բարերար քաջքերը: Այսպես, Ե. Լալայանը հիշատակում է Գետաշենի Քաջքաձորի Քաջքաբուն ճեղքված քարը, որի միջով թույլ, «կոխված» երեխաներին են անցկացրել՝ ապաքինման նպատակով[1]: Հնարավոր է, որ «քաջք» բառն այստեղ բնորոշում է ոչ այնքան անտեսանելի ոգիներին, որքան հենց լեռնային հսկաներին: Ավելին, հայկական առասպելներում և հատկապես հեքիաթներում քաջքերը ներկայանում են ոչ թե որպես վնասատու ոգիներ, այլ ավելի շուտ՝ որպես օտար ժողովուրդ, որը կարող է պատերազմել, մրցակցել կամ բարեկամանալ, ամուսնանալ մարդկային ցեղի ներկայացուցիչների հետ: Այդպիսին են Պռոշի թրին տիրանալու համար պայքարող Քաջքերը[2], այդպիսին է նաև հերոս Շիրինի հարազատ եղբայրը, որ դառնում է Քաջանց թագավոր[3]: Գեղարքունիքի Գեղհովիտ գյուղում գրառված «Մաշուրի խեքաթում» հերոսը ոչ միայն բնակվում է քաջքերի քաղաքում և ամուսնանում է արքայադստեր հետ, այլև տեղեկանում է քաջքերի աստվածության՝ Ամա Քաջ Հուդը Բաշի մասին[4]: Այսպիսով, քաջքերը հսկա-օղուզների պես ներկայացնում են Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի բնակիչներին: Եվ քաջքերը նույնպես, ճիշտ լեռնային հսկաների նման, մատուցվում են մերթ վայրի, բնական ուժերին բնորոշ ամեհի կործանարար ուժի տեր արարածներ, մերթ քաղաքակիրթ, զենք ու շենք սարքող, կրոն ունեցող մարդիկ: Այդուհանդերձ, հաճախ լեռնային Ճգնավորները կապ չունեն քաջքերի հետ, և գոնե Զանգեզուրի հավատալիքներում քաշկերը մեծ մասամբ անտեսանելի չար ոգիներ են[5]: Ի տարբերություն հայկական նյութի՝ կովկասյան այլ ժողովուրդների, մասնավորապես, օսերի, լեռնային առասպելաբանությունը, որի որոշ սյուժեներն, այդուհանդերձ, համընկնում են հայկականների հետ, ունի նաև «լեռնային ոգիների», «սատանաների» կամ այդպես որակված տեսակ-տեսակ չարքերի հետ կապված սյուժեներ: Դրանցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում երկուսը: Գ. Աստվածատրյանի գրառած և մշակած օսական-իռոնական «Երանության ձորը» լեգենդը առասպելի լեզվով նկարագրում է Ճորա Պահակի Սատանայի ձոր կիրճի գոյացման պատմությունը, որի մեջ հանդես են գալիս Գուդ լեռան ոգին, թագաորների[6] իշխան Սև ձիավոր Արագվան և գեղեցկուհի Դոսաննան: Գուդը սիրահարվում և առևանգում

1 **Լալայեան Ե.**, Գանձակ գաւառ// ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 330:

2 **Բենսէ**, Բուլանըխ կամ Հարք գաւառ// ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899, № 1, էջ 14:

3 **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հատ. XI, Երևան, 1980, էջ 99, 113-114:

4 **Ստեփանյան Գ.**, Սևան-Դդմաշեն, ՀԱԻ արխիվ, Գ. Ստեփանյանի ֆ., թղթ. 2, թ. 157:

5 Ս. Լիսիցյանը չափազանցնում է՝ ասելով, որ «քաշկ» անվանումը բնորոշ է միայն ազգագրական այն շրջաններին, որտեղ նշում են աշնանային Նավասարդը, տես՝ Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 299: Ինչպես հայտնի է, քաջքերի մասին հավատալիքներ ու առասպելական բազմաթիվ սյուժեներ կան նաև Արևմտյան Հայաստանի նյութերում: Ուղղակի իր դիտարկած նյութում քաշկերին է վերագրվում այն, ինչն այլուր կարող է կապված լինել ալքերի, սատանաների, շվոտների և զանազան այլ ոգիների հետ:

6 Կովկասյան Թագաոր ժողովուրդը, ըստ լեգենդների, ունի հայկական ծագում, և ցեղանունն էլ առաջացել է հայերեն «թագաւոր» բառից, սակայն այս խնդիրը դուրս է սույն հետազոտության շրջանակներից:

է Դոսաննային ու փորձում նրա հետ թաքնվել իր տանը՝ ժայռի մեջ: Սակայն Արագվային հաջողվում է ներխուժել այնտեղ: Ժայռը փակվում է, բայց քիչ անց շողշողում է կայծակը, ժայռը պատռվում է, և դրա միջից դուրս է հորդում գետ դարձած ամեհի Արագվին՝ իր հետ տանելով Դոսաննային, որը վերածվել էր ջրերի ոգի Դոնի Չիզչիտուի: Այդ օրվանից չի դադարում պայքարը Գուդ լեռան և Արագվի գետի միջև, Երանության ձորը վերածվում է Սատանայի ձորի, իսկ ջրերի ոգին, մե՛րթ ժայռոտ ափին նստած լալիս է, մե՛րթ բռնում և խեղդում է գետն անցնող հարսնացուներին[1]: Կովկասյան մյուս առասպելը իր ճանապարհորդության ընթացքում լսել է ֆրանսիացի գրող Ա. Դյուման՝ առանց նշելու, սակայն, թե որ ժողովրդի ներկայացուցիչն է այն պատմել: Այս առասպելի համաձայն՝ Կովկասի ամենաբարձր լեռան վրա ապրում էր Աստծու սիրելի Ճգնավորը, որին օր ու արև չէր տալիս մշտապես գայթակղող սատանան: Ճգնավորն աղոթում է Աստծուն՝ խնդրելով հնարավորություն տալ իրեն «դարձի բերել» սատանային: Թույլտվություն ստանալով՝ նա ունելին շիկացնում է կրակի վրա, և հենց սատանան գլուխը ներս է մտցնում իր այր-խցի մուտքից ներս, ունելիով ամուր բռնում է սատանայի քիթը: Սատանան ցավից գալարվում է և սկսում է պարել լեռան վրա՝ պոչով հարվածելով ու փշրելով շրջակա բոլոր լեռները՝ Անապայից մինչև Բաքու: Ահա այդ հարվածներից էլ առաջացել է Կովկասի լեռնաշղթան իր խորախոր ձորերով[2]:

Որքան էլ վերջին պատմությունը հիշեցնի «գրքային» զրույցները միայնակյացի ու նրան գայթակղող տեսիլքների մասին, և որքան էլ որ օսական լեգենդը վերաբերի հենց Գուդ լեռանը և Արագվի գետին, այլ ոչ՝ օղուզներին կամ քաջքերին, ակնհայտ է երկու մոտիվ, որոնք բնորոշ են և՛ այս պատումներին, և՛ Սյունիքի-Արցախի բանահյուսական նյութերին.

ա. լեռնային հրեշի սիրահարվելը մահկանացու աղջկան,

բ. պայքարի հետևանքով առաջացող լանդշաֆտային փոփոխությունները, ընդ որում, Ա. Դյումայի շարադրած առասպելը նաև կապվում է լեռան վրա ապրող ճգնավորի հետ:

Այդ առումով հարկ է ուսումնասիրել՝ որքանո՞վ են առնչվում Ճգնավոր և Նահատակ կոչվող մյուս սրբավայրերը հնամենի լեռնային առասպելաբանության հետ: Այդ անուններով սրբատեղի-ուխտավայրեր հայտնի են պատմական Հայաստանի բազմաթիվ վայրերում, բայց դրանց առատությունը բնորոշ է մի կողմից Արագածոտնին, մյուս կողմից՝ Զանգեզուր-Արցախ տարածաշրջանին: Որպես օրենք, անանուն այդ ճգնավորներին նվիրված պաշտամունքավայրերը բարձրադիր քարանձավներ են կամ ժայռափոր մատուռներ, հաճախ՝ դժվարամատչելի, որտեղ կարող են մագլցել միայն առավել խիզախ ու ճարպիկ երիտասարդները[3]: Սովորաբար, այդտեղ մոմեր են վառում, նվիրական գրություններ անում պատերի ու առաստաղի վրա, թողնում նվերներ՝ գլխաշոր, խաչ, սրբապատկեր և այլն:

Բարձրադիր Ճգնավոր քարանձավ-մատուռները արտահայտում են այն

---

1 **Аствацатурьян Г.**, Долина блаженства, Тифлис, 1893, с. 19-21:

2 Շարադրված է ըստ **П. П. Надеждин**, Природа и люди на Кавказе и за Кавказом, СПб, 1869, с. 57-58:

3 Այսպիսի Ճգնավորի քարայր-սրբավայրեր ուսումնասիրել ենք Ամբերդում, Արտաշավանում, Տեղերում, բոլորը՝ Արագածոտնի մարզ:

պատկերացումը, որ բարձր ժայռերը Աստծուն մոտ լինելու պատճառով հաճախ են գրավել ճգնավորական կյանք վարել ցանկացողներին, և այդ մաքրակենցաղ անձինք, նրանց բնակվելու և մահանալու վայրերը, գերեզմանները սրբության հետք են թողել և կարող են օգնել ապրողներին լուծելու իրենց հոգևոր ու մարմնական խնդիրները: Այսինքն, եթե հնում պաշտվում էր ինքը սարը, հետագայում այն ստանում է նոր իմաստավորում՝ որպես սրբերի բնակության վայր՝ դրանով իսկ ձգելով դեպի իրեն բարեպաշտ քրիստոնյա ուխտավորների բազմությանը: Այսպես, Ճգնավոր է կոչվում նաև Խուստուփի բարձունքներից մեկը, և այդ վայրում ևս ուխտատեղի-քարայր է[1]: Մռավ լեռը ևս համարվել է սրբավայր և եղել է ուխտատեղի՝ պատճառաբանությամբ, որ դրա վրա է գտնվել անհայտ մի սրբի գերեզման[2]:

Սակայն «հեթանոսական» առասպելաբանությունը ուղղակի չէր վերացել և իր տեղը զիջել քրիստոնեականին, այլ հաճախ, ինչպես Շաղատում կամ Գետաշենում, երկուսը գոյակցել են, ավելին, այդ գոյակցությունը սկիզբ է տվել ինչ-որ «միջանկյալ» առասպելաբանության, որի մեջ հին-հեթանոսականն ու քրիստոնեականը մարտի են բռնվել: Հասկանալի է, որ հաճախ քրիստոնյա նահատակ-ճգնավորն էլ կարող էր հանդես գալ երբեմնի հսկա-հերոսի նման, քանի որ միայն հսկան կարող է հաղթել մեկ այլ հսկայի: Այսպես, Պանտ-Պանդալեոնը, սարը և սուրբը միաժամանակ, Գետաշենի առասպելում իր հսկայական նիզակով ժայռին է գամում լեռնային հսկային այնպես, ինչպես երբեմնի հսկա Հայկը նետահարում է Բելին: Սյունիք-Զանգեզուրի և Ղարաբաղի լեռնային առասպելաբանության առանձնահատկությունն այն է, որ բնապաշտական տարրերը միանգամայն պարզ երևում են բուն քրիստոնեական շերտի տակ:

Ս. Պանդալեոն բժշկի պաշտամունքը բոլորովին էլ բնորոշ չէ Հայաստանի մյուս վայրերի համար և, ըստ էության, սահմանափակվում է միայն Զանգեզուր-Արցախ տարածքով, որտեղ մի քանի եկեղեցիներ ու մատուռներ կան այդ սրբին նվիրված: Նրա՝ Սյունիքի ժողովրդի մեջ ժողովրդականություն վայելելը վկայված է նաև պատմիչների կողմից, ուրեմն և բավական հին է, ընդսմին Ս. Պանդալեոնի հանդեպ զանգեզուրցիների և արցախցիների հատուկ գորովալից վերաբերմունքը ակներևորեն կապված է ինչ-որ տեղական երևույթի հետ: Դժվար է ասել, Պանտ սարի անու՞նն է ի սկզբանե համընկել այդ սրբի անվան հետ, թե՞ սուրբն է իր անունը տվել իր պաշտամունքավայրը հանդիսացող սարին, սակայն սրբի և պաշտամունքի առարկա սարի առասպելաբանությունները միահյուսվել են:

2017թ. Սոդք գյուղում բնակվող գետաշենցիների, ոսկանապատցիների, էրքեջցիների և Գանձակի շրջակայքի հայաբնակ գյուղերի նախկին բնակիչների հիշողությունները գրառելու նպատակով կատարված գիտարշավի ընթացքում պարզվեց, որ Պանդասարի ընկալումը, որպես սրբազան օբյեկտ, չի մոռացվել: Սոդքի գետաշենցի բնակիչները դեռևս հիշում են «Էն Պանդը» երդման բանաձևը և սիրով պատմում են իրենց ուխտագնացությունների պատմությունները, որ կատարվում էին օգոստոսի վերջին երկու կիրակի օրերը: Գյուղապետ, ծագումով ոսկանապատցի Կոլյա Շախսուվարյանը հայտնեց նաև Պանդի առասպելի՝ իրեն հայտնի տարբերակը, համաձայն որի՝ Պանդալեոնը բժիշկ է եղել

1 **Լիսիցյան Ս.**, նշվ. աշխ., էջ 281:
2 **Բարձունի Հրահատ**, Զեյվա// Մեղու Հայաստանի, 1874, թ. 36, էջ 1-2:

և սպասարկել է Գետաշենի հարևանությամբ գտնվող սարի հինգ գյուղերի հիվանդներին: Երբ նա մահացել է, նրան ուզեցել են թաղել գյուղում, սակայն մյուս չորս գյուղի բնակիչները դեմ են եղել: Որոշել են թաղել այնպիսի մի վայրում, որ մոտ լինի բոլոր հինգ գյուղերի բնակիչներին: Այդ է եղել պատճառը, որ նրա գերեզմանը գտնվում է տարածքի ամենաբարձր կետերից մեկին՝ մոտ 2 կմ բարձրության վրա[1]: Այս պատմությունն, իհարկե, ոչնչով չի հիշեցնում լեռնային հսկաների և ճգնավորների հակամարտության սյուժեն, այլ «անարծաթ բժշկի» ժողովրդաքրիստոնեական պատմություն է, որը վկայում է ավանդույթի կերպարանափոխման, հետագա քրիստոնեացման մասին:

Սարերի վրա ապրող քաջքերի ու վիշապների մասին գրել է դեռևս Ս. Գրիգոր Լուսավորիչը. «Ասեն քաջաց և վիշապաց տնարք (իմա՝ տաճարք) են ի լերինս բարձունս և բնակութիւնք, և զԱղէքսանդր կապեալ ունին ի Հռոմ և զԱրտաւանդ ի Մասիս և զԱրուանդ ի գետս և ի մառանս»[2]: Առանց լեռնային առասպելաբանության դիտարկման՝ այս դրվագը, անգամ Արտավան(դ)ի փոխարեն Արտավազդի անունը տեղադրելու դեպքում, միանգամայն մութ կմնար: Սակայն օղուզների և լեռնային այլ հսկաների, այս դեպքում՝ վիշապ կամ ուշափ կոչվող հսկա-հրեշների շուրջ պահպանված ժողովրդական բանահյուսությունը թույլ է տալիս համեմատելու չորրորդ դարի պատկերացումները ազգագրական շրջանում գրառածների հետ: Այսպես, Տանձատափ գյուղի հարևան տափարակ բարձավանդակի վրա կանգնած է անձեռակերտ Քաշկի քարը, որ, համաձայն տեղի ժողովրդի պատկերացումների, կանգնեցրել են քաշկերը[3]: Թվում է, թե Ս. Գրիգորից մինչև 20-րդ դար, չնայած կենցաղի և աշխարհայացքի փոփոխություններին, լեռների՝ որքան բնական, այնքան էլ առեղծվածային կերպարանքի շուրջ ընկալումները այնքան էլ չեն փոխվել, քանի որ պահպանվել են Քաշկի քարի պես անվանաձևերը և որոշ հնամենի պաշտամունքներ և ուխտագնացություններ:

Անդառնալի կորուստները, որ կրել է տարածաշրջանի պաշտամունքային կյանքը և հատկապես սրբավայրերի մասին բանահյուսությունը խորհրդային տարիներին, խիստ դժվար է դարձնում նման ուսումնասիրությունը: Այդուհանդերձ, նույնիսկ այսօր դեռևս հնարավոր է հայտնաբերել հնամենի առասպելական զրույցներ և ոչ մեծ պատումներ բարձրադիր սրբավայրերի մասին, ուրեմն և անհրաժեշտ է շարունակել ուսումնասիրությունը դրանք հայտնաբերելու ուղղությամբ:

Սակայն Զանգեզուրի և Արցախի լեռնային լեգենդները չեն սահմանափակվում հսկաների ու ճգնավոր-նահատակների սյուժեներով: Այդ առասպելաբանության մեկ այլ ծավալուն շարք է իգական կերպարների, մասնավորապես Աղջկա բերդ կոչվող ձեռակերտ և անձեռակերտ հուշարձանների մասին լեգենդների բույլը, որի մեջ նույնպես նշմարվում են հնագույն հավատալիքների և դրանց քրիստոնեացված ձևերի հետքերը: Այդ առասպելաբանությունն արդեն միավորում է ավելի լայն տարածք, որի մեջ մտնում են Նախիջևանը և Տավուշը, և այն նույնպես արժանի է առանձին ուսումնասիրության:

1 **Սիմոնյան Լ., Հակոբյան Հ.**, ԴԱՆ, Վարդենիս-Սոդք, 2017:

2 **Խաչիկյան Լ.,** Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության երախայրիք// «Բանբեր Մատենադարանի», 7, Երևան, 1964, էջ 304:

3 Քաշկի քար// ՀԱԻ արխիվ, Արամ Մարգարյանի ֆ., թղթ. 1, թ. 110-111:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ս., Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 8, Երևան, 1978:

2. Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ// ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899, № 1, էջ 5-184:

3. Բենսէ, Բուլանըխ, կամ Հարք գաւառ// ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 7-108:

4. Բիւզանդիոնի թղթակից, Խալտեան հնութիւնք// «Բիւզանդիոն», 1899, № 699, էջ 1:

5. Գապասագալեան Թ., Էզէկէլին հեքեաթը, «Բիւրակն», 1899, թ. 35, էջ 555-556:

6. Եղիազարյան Ս., Օղուզն ու մարդը. երեք դարաշրջան տիեզերքի պատմութիւնից// Գեղարուեստ, 1906, թ. 6, էջ 147-154:

7. Ժամկոչյան Ա. եպս., Սիմոնյան Լ., Աստվածաշնչյան Նեբրովթը և Նեմրութ թագավորը հայ բանահյուսության մեջ// Տարեգիրք Աստվածաբանական ֆակուլտետ, ԺԱ, 2016, էջ 273-302:

8. Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 3, Երևան, 1975

9. Լալայեան Ե., Գանձակ գաւառ// ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 232-382:

10. Լալայեան Ե., Զանգեզուր// ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 7-117:

11. Լալայեան Ե., Սիսիան// ԱՀ, հատ. Գ, Թիֆլիս, 1897, էջ 105-272:

12. Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:

13. Խալաթեան Գ., Ժողովրդական բանաւոր գրականութեան տեսակները, «Բիւրակն», 1898, թ. 8, էջ 121-122:

14. Խաչիկյան Լ., Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը», որպես հայ մատենագրության երախայրիք// «Բանբեր Մատենադարանի», 7, Երևան, 1964, էջ 301-330:

15. Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. II, Երևան, 1959:

16. Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. VIII, Եր., 1976:

17. Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. XI, Երևան, 1980:

18. Հալաջյան Գ., Դերսիմի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 5, Երևան, 1973:

19. Հրահատ Բարձունի, Զէյվա// Մեղու Հայաստանի, 1874, թ. 36, էջ 1-2:

20. Մնացականյան Ա., «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի դիցաբանության մասին// Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի. Հասարակական գիտություններ, 1952, №5, էջ 73-100:

21. Սարգիսեան Ն., Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

22. Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 1, Երևան, 1978:

23. Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 2, Երևան, 1982:

24. Аствацатурьян Г., Долина блаженства, Тифлис, 1893:

25. Девицкий В., Чудовище и отшельник, СМОМПК, вып. 24, Тифлис, 1898, отд. второй, с. 224-226.

26. Джейранов Ф., Селение Чайкенд, СМОМПК, вып. 25, Тифлис, 1898, отд первый, с. 59-100.

27. Надеждин П. П., Природа и люди на Кавказе и за Кавказом, СПб, 1869.

28. ՀԱԻ արխիվ, Արամ Մարգարյանի ֆ., թղթ. 1:

29. ՀԱԻ արխիվ, Բ. Ղազիյանի ֆ., թղթ. 4, մատյան 9, թ. 18-20:

30. Ղազարյան Ն. Ս., Գանձակի գավառի (Ելիզավետպոլի) հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները// ՀԱԻ ԱԲԱ, թղթ. 81, 2/014, թ. 62:

31. Ստեփանյան Գ., Սեւան-Դդմաշեն, ՀԱԻ արխիվ, Գ. Ստեփանյանի ֆ., թղթ. 2

32. Չիթունի Տ, Սպակերտի ազգագրական նյութեր// ԳԱԹ, Չիթունու ֆ., 2-ժէ, թ. 15:

33. Սմբատեանց Մ., Ստորագրություն Օշական գեղջ և նորաբաց դպրոցին յանուն Ս. Մեսրովբայ թարգմանչին, 1864 յունվար յՕշական, թ. 18բ (Ձեռագիրը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում):

34. Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ, Երևջատափ, 2017:

ЛИЛИТ СИМОНЯН - СВЯЗЬ МЕЖДУ ГОРНЫМИ СВЯТИЛИЩАМИ СЮНИК-ЗАНГЕЗУРА И АРЦАХА И МИФОЛОГИЕЙ ДОИСТОРИЧЕСКИХ ВЕЛИКАНОВ- Горная мифология Сюника и Арцаха содержит сказания о Хрушане, Ушапе, Боле, Огузе и ряде безымянных великанов, которые могут быть архаичными и представлять геологические процессы на языке мифа либо связываться с историческим, близким рассказчику временем. Их сюжеты часто связаны с христианскими паломными местами, святилищами, часть которых носит название Чкнавор (Отшельник) или посвящена Св. Панталеону. Таким образом архаический культ принимал христианский облик и одновременно сохранял древнюю мифологию.

Ключевые слова: великан, святилище, Зангезур, Арцах, Отшельник, горная мифология, азнавур.

LILIT SIMONIAN - CONNECTION BETWEEN THE MOUNTAIN SANTUARIES OF SYUNIK_ZANGEZUR AND ARTSAKH AND THE MYTHOLOGY ON PREHISTORIC GIANTS - The mountain mythology of Syunik and Artsakh includes stories about Hrushan, Ushap, Bol, Oghuz and other, mostly anonymous giants. Those mythological stories may be archaic and represent geological processes in terms of a myth or be connected with historical times more recent and contemporary to the story-teller. Their plots mostly refer to Christian pilgrimage sites and sanctuaries, a part of which bears the names of Chknavor (Hermit) or is dedicated to St. Pantaleon. In this way the arcaic sanctuary acquires a Christian image and simultaneously preserves its ancient mythology.

Keywords*:* giant, sanctuary, Zangezur, Artsakh, hermit, mountain mythology, aznavur.